

1. Հաշվել՝  $\left| 5\frac{3}{7} - \left( 2,5 + 1\frac{1}{3} \right) : \frac{1}{6} \right|$  :

Պատ.՝  $\frac{123}{7}$

2. Վինի Թուխը, Խոզուկը, Ճագարը և Իշուկը կերան մի տակաոռիկ մեղր: Ընդ որում Խոզուկը կերավ Վինի Թուխի կերածի կեսի չափով, իսկ Ճագարը՝ Վինի Թուխի չկերածի կեսի չափով: Իշուկը կերավ մեղրի տասներորդ մասը: Մեղրի ո՞ր մասը հասավ Ճագարին:

Պատ.՝  $\frac{3}{10}$

3. Գտնել զրոյից տարբեր թվանշաններով գրվող այն քառանիշ թվերը, որոնց առաջին երեք թվանշանների գումարը հավասար է 24, իսկ վերջին երեք թվանշանների գումարը՝ 16:

Պատ.՝ 9781, 9871, 9961, 9691

4. Դասարանի բոլոր աշակերտների 20 %-ը և ևս 5 աշակերտ խաղում են շախմատ, իսկ  $\frac{3}{7}$  մասը և ևս 8 աշակերտ՝ վոլեյբոլ: Քանի՞ աշակերտ է սովորում դասարանում, եթե դասարանի յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է այդ խաղերից միայն մեկին:

Պատ.՝ 35

5. Խանութում կար 1,75 տ խնձոր և 1,1 տ տանձ: Օրական վաճառվում էր 125 կգ խնձոր՝ կիրգրամը 250 դրամով, և 110 կգ տանձ՝ կիրգրամը 300 դրամով: Նվազագույնը քանի՞ օրում խնձորի վաճառքից ստացված հասույթը /գումարը/ կգերազանցի տանձի վաճառքից ստացված հասույթին:

Պատ.՝ 11


6. Շրջանագծի վրա վերցրել են 8 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երեքը՝ կապույտ գույնով, իսկ մյուս երեքը՝ ծիրանագույն: Գտնել այն եռանկյունների քանակը, որոնց գագաթները նշված կետերն են և, որոնց գագաթներից գոնե երկուսը ներկված են նույն գույնով:

Պատ.՝ 38

7. Արամը գրեց 136 հատ սովորական կանոնավոր կոտորակ՝  $\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{2}{3}, \frac{1}{4}, \frac{2}{4}, \frac{3}{4}, \frac{1}{5}, \frac{2}{5}, \frac{3}{5}, \frac{4}{5}, \dots$ , որից հետո այն կոտորակները, որոնք փոքր են  $\frac{1}{2}$ -ից, ներկեց կարմիր գույնով, իսկ մնացած կոտորակները՝ կապույտ գույնով: Ո՞ր գույնի կոտորակներն են շատ և որքանով:

Պատ.՝ Կապույտը 8-ով

8. 11 սմ, 9 սմ, 7 սմ և 5 սմ կողմերով քառակուսիները դասավորված են այնպես, ինչպես ցույց է տրված նկարում: Պարզվել է, որ գորշագույն մասերի մակերեսների գումարը կրկնակի մեծ է սև մասերի մակերեսների գումարից: Գտնել սպիտակ մասերի մակերեսների գումարը:



Պատ.՝ 42